Կարգապահական գործ թիվ ԿԳ-19082

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Գրիգորյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 255) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական գործի նախապատմությունը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի ***(այսուհետ՝ Պալատ)*** նախագահի 01.07.2019թ. թիվ 207-Ա/ԿԳ-19082 որոշմամբ փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 255) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի ***(այսուհետ նաև՝ Օրենք)*** 19-րդ հոդվածի 2-րդ կետի, «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի ***(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)*** 2.7.2, 3.1.8, 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Պալատի խորհուրդը 26.11.2019թ. թիվ ԿԳ/160-Ա որոշմամբ ***(այսուհետ՝ Որոշում)*** Փաստաբան Արթուր Գրիգորյանին ճանաչել է մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

Փաստաբանը Որոշումը բողոքարկել է ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան թիվ ԵԴ/1649/02/20 քաղաքացիական գործի

թիվ ԿԳ-19082-2-Ա
17.09.2025թ.

շրջանակներում, որի վարույթը դատարանի 17.10.2022 թվականի որոշմամբ կարճվել է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

Փաստաբանը Որոշումը բողոքարկել է ՀՀ վարչական դատարան թիվ ՎԴ/7587/05/22 վարչական գործի շրջանակներում, որով դատարանի 24.07.2024 թվականի կայացված վճռով Փաստաբանի հայցը մերժվել է:

Փաստաբանը նշված վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Փաստաբանը 08.11.2024 թվականին ներկայացրել է դիմում՝ Որոշումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու և թիվ 19082 կարգապահական գործը Պալատի կարգապահական հանձնաժողով նոր քննության ուղարկելու մասին:

Պալատի խորհրդի 12.12.2024 թվականի թիվ 19/11-Ա որոշմամբ բավարարվել է Փաստաբանի դիմումը և վերացվել է Որոշումը՝ թիվ 19082 կարգապահական գործն ուղարկելով Հանձնաժողովին վերանայման:

Թիվ 19082 կարգապահական գործը Հանձնաժողովի նախագահի 07.07.2025 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Քաղաքացի Սիմա Թորգոմյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), 07.07.2019թ. դիմելով Պալատ, ըստ էության հայտնել է, որ 13.04.2016թ. կնքել է փաստաբանական ծառայությունների տրամադրման մասին պայմանագիր և վճարել է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ 16.04.2016թ հասարակ գրավոր ձևով լիազորել է փաստաբան Արթուր Գրիգորյանին, որպես իր շահերի ներկայացուցիչ, հանդես գալու ՀՀ քրեական հետապնդում իրականացնող մարմիններում և դատարաններում, համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, բոլոր դատական ատյաններում, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում և կատարել այլ գործողություններ կապված իր շահերի հետ:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը թիվ ՎԴ/5074/05/14, թիվ ԵԿԴ/1726/02/15 և թիվ ԵԷԴ/0635/02/16 գործերով ճիշտ չի իրականացրել իր պաշտպանությունը, որի արդյունքում բոլոր դատական ակտերը կայացվել են ի վնաս իրեն: Դեռ ավելին՝ իրեն ներկայացրել են սխալ տեղեկություններ, մասնավորապես հայտնվել է, որ դատական ակտը չի ստացել, սակայն գործի նյութերին ծանոթանալու ժամանակ ի հայտ է եկել այն փաստը, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը ստացել է դատարանից համապատասխան որոշումը, որի վերաբերյալ կա թիվ ՎԴ/5074/05/14 վարչական գործում ծանուցագիրը ստանալու մասին ապացույց:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը ոչ բոլոր դատական նիստերին է մասնակցել, իսկ հեռախոսազանգերին չի պատասխանել: Քանի որ իրենց միջև կնքված պայմանագրի և լիազորագրի ժամկետը ավարտվում էր 13.04.2019թ., ուստի՝ ինքը վերադարձել է ԱՄՆ-ից 06.04.2019թ. և ամեն օր փորձել է կապ հաստատել

փաստաբանի հետ, սակայն իր բոլոր փորձերը և հեռախոսազանգերը մնացել են անպատասխան և ապարդյուն: Բացի այդ, քանի որ 29.04.2019թ. նշանակված է եղել դատական նիստ, որին որպես իր ներկայացուցիչ պետք է մասնակցեր փաստաբան Արթուր Գրիգորյանը, նրան ուղարկել է հաղորդագրություններ նշանակված դատական նիստի մասին, սակայն նա դարձյալ չի ներկայացել և չի պատասխանել հաղորդագրություններին:

Դիմողը հայտնել է նաև, որ 2019 թվականին մեկ ամիս անց իրեն հաջողվել է հանդիպել փաստաբան Արթուր Գրիգորյանին, և այդ ժամանակ իմացել է, որ վերջինս իր աշխատանքային վայրը փոխել է և խոսակցության ժամանակ նա առաջարկել է նոր լիազորագիր տրամադրել հետագա դատական նիստերին մասնակցություն ունենալու համար: 03.05.2019թ. Դիմողը լիազորել է Արթուր Գրիգորյանին, որպեսզի վերջինս ներկայացնի իր շահերը դատական ատյաններում, որից հետո ինքն ինքնուրույն դիմել է դատարաններ, իր վերաբերյալ դատական ակտերը վերցնելու համար, արդյունքում պարզ է դարձել, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը պատշաճ ծառայություն չի մատուցել:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Արթուր Գրիգորյանն իր հետ վիճաբանել և սպառնացել է, որի հետևանքով ինքը ցանկացել է դադարեցնել իր լիազորագիրը, որը տրվել է 03.05.2019թ.:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Արթուր Գրիգորյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, սակայն Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել: Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել: Պալատի խորհրդին Պատասխանողը չի ներկայացել, սակայն պատշաճ կարգով տեղեկացված է եղել Պալատի խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին:

4. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 01.07.2019թ. թիվ 207-Ա/ԿԳ-19082 որոշմամբ փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

5. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն հաստատված է համարել հետևյալ փաստերը՝

1. Դիմող Սիմա Թորգոմյանի և Պատասխանող փաստաբան Արթուրի Գրիգորյանի միջև 13.04.2016թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր.

2. 13.04.2019թ. Դիմող Սիմա Թորգոմյանի կողմից Պատասխանող փաստաբան Արթուր Գրիգորյանին հասարակ գրավոր ձևով տրվել է լիազորագիր.

3. Դիմող Սիմա Թորգոմյանի կողմից Պատասխանող փաստաբան Արթուր Գրիգորյանին վճարվել է 500.000 ՀՀ դրամ.

4. Դիմող Սիմա Թորգոմյանի կողմից վկայակոչված գործերն են՝ թիվ ՎԴ/5074/05/14, ԵԿԴ/1726/02/15 և ԵԷԴ/0635/02/16, որոնցով առկա չեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր. գործերի քննությունը շարունակվում է.

5. Դիմող Սիմա Թորգոմյանը պարբերաբար ցանկացել է ստանալ տեղեկություններ Պատասխանող փաստաբան Արթուրի Գրիգորյանից գործի ընթացքի վերաբերյալ, ցանկացել է հանդիպել, զրուցել վերջինիս հետ, Պատասխանող փաստաբան Արթուր Գրիգորյանից դժգոհություն է հայտնել գործի ընթացքի վերաբերյալ՝ ներառյալ, որ Պատասխանող փաստաբան Արթուրի Գրիգորյանը Դիմող Սիմա Թորգոմյանին չի զանգահարել, վերջինիս զանգերին չի պատասխանել, գործի վերաբերյալ իրեն չի տեղեկացրել, ապացույցներ չի ներկայացրել, դատական նիստերին չի մանասնակցել:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 04.07.2025թ.-ին:

Պալատի Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 16.07.2025թ. ժամը 20:00-ին, 17.09.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Փաստաբան Արթուր Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 10.10.1995թ.: Արթուր Գրիգորյանի նկատմամբ 2015-2018թթ ընկած ժամանակահատվածում 13 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (13 ավարտված):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.6.1 և 3.6.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 05.01.2023թ. թիվ 1/21-Լ որոշմամբ հաստատված Հանձնաժողովի գործունեության կարգի 57-րդ կետի համաձայն՝ *խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով: (...)*

Հանձնաժողովի նիստին ներկա գտնված 7 անդամները հեռացել են խորհրդակացական սենյակ որոշում կայացնելու: Խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով, որպիսի պայմաններում քվեարկության արդյունքում սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության կարգի 57-րդ կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 255) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-19082 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-19082-2-Ա
17 սեպտեմբերի 2025թ.
ք.Երևան